

## ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Զեյթունցի. «ԶԵՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԼԱՀՆ ԵՒ ՆԵՐԿԱՑԵՆ», ք. մասն, 1903. Պարփակ.  
241 էլ. գինը 2,5 ֆունկ—1 ռուբլի:

ԶԵՅԹՈՒՆԸ մի հետաքրքիր վայր է—հետաքրքիր իր անցեաւով ու ներկայով, իր մզած հերոսական կույներով:

Ահա այդ «անցեալին ու ներկային» է վերաբերում այս աշխատութիւնը, որի առաջին մասը լոյս է տեսել դեռ անցեալ 1900 թւականին:

Գիրքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում բաւական կենդանի գոյներով պատկերացրուած են ԶԵՅԹՈՒՆԻ 1895 թ. պատերազմի պատճառները, Աղասիի և նրա ընկերների բանակցութիւնը ԶԵՅԹՈՒՆԻ մեծամեծների հետ, պատերազմի բռնկումը, թիւրքական զօրանոցի գրաւումը, եւրոպական վեց հիւպատոսների միջամտութիւնը և պատերազմի հետևանքները—հաշտութեան պայմանները:

Ֆրանսիական դեղին զրբի տեղեկութիւնների (եր. 84—85) համեմատ այդ պատերազմին մասնակցող թիւրքական բանակը բաղկացած էր ընդամենը 50,000 հոգուց—այն է 20,000 կանոնաւոր զօրք և 30,000 բաշիբոզուկներ, որոնցից զոհուել են 20,000 հոգի (13,000 կանոնաւոր զօրքից, իսկ մնացած 7,000 բաշիբոզուկներից):

Իսկ ԶԵՅԹՈՒՆցին «թիւրքական ճշգրիտ ազբիւրների, թապուր Քեաթիպի, Մուստաֆա էֆէնդիի պատմածի հիման վրայ» պնդում է (եր. 34 և 69), որ թիւրքական բանակը աւելի մեծ է եղել, այսինքն 110,000 հոգի, որից 40,000 կանոնաւոր զօրք, իսկ մնացածը անկանոն՝ թիւրք, քիւրդ, չէրքէզ խուժան, եթէ նոյն իսկ ընդունենք, որ այդ թւերը մի քիչ չափազանցրուած են, այնուամենայնի իրբե անհերքելի փաստ կը մնայ այն իրո-

դութիւնը, որ մի ահոնելի գօրութիւն է ունեցել թիւրքական բանակը: Եւ այդ զօրութեան հանդէպ փոքրիկ Զէյթունը կանգնեցրել է միայն 6000 զինուոր, որոնցից 4000-ը հրացանով զինուած, իսկ մնացած 2000-ը՝ տապարով, դաշոյնով և ուրիշ մահացու գործիքներով:

Այդ պերճախօս թւերից կարելի է եզրակացնել, թէ ինչպիսի հերոսութիւն էր զէյթունցիների կատարածը, թէ որքան մեծ ու գնահատելի էր նրանց տարած յաղթանակը:

Այդ հերոսութեան նկարագիրը տալուց յետոյ հեղինակը առաջ է բերում զէյթունցիների շարադրած մի քանի երգեր (Բերդիչ չայը, Զէյթունի երգը, Զէյթունի զէսթանը, Զէյթունի զովասանքը) — նախ տեղական բարբառով կամ թիւրքերէն և ապա թարգմանաբար:

Գրքի երկրորդ մասը — յաւելուածը (116—237 եր.) իր մէջ պարունակում է մի շարք կարճ-կարճ յօդուածներ, որոնցից մի մասը պատկերացնում է Զէյթունի ընթացիկ կեանքը, բարքերը, սովորութիւնները և անտեսական վիճակը. իսկ միւս մասը տալիս է մի քանի նշանաւոր զէյթունցիների համառօտ կենսագրութիւնը և միջանկեալ պատմուածքներ Զէյթունի կեանքից:

Մենք մի առանձին հետաքրքրութեամբ կարդացինք այդ յաւելուածի առաջին մասը: Պատմաոը հասկանալի է: Ճիշտ է, Զէյթունի մասին շատ են գրել ու խօսել, շատ յօդուածներ ու գրքոյկներ են լոյս ընծայուել, բայց դրանք բոլորն էլ զլխաւորապէս պատմական-նկարագրական բովանդակութիւն են ունեցել, որ պատկերացրել են հոչակաւոր լեռնավայրի պատերազմները: Իսկ երկրի ներկայ անտեսական — սոցիալական վիճակը, ժողովրդի բարքերն ու սովորութիւնները համարեա մի terra incognita էր մնացել:

Ահա այդ գաղտնիքի վարագոյրը բարձրացնել է փորձում Զէյթունցին: Նա թուուցիկ կերպով խօսում է իր հայունիքի անտեսական վիճակի, շուկայի և նշանաւոր անտառների ու արօտավայերի մասին, իր հայրենակիցների կերակուրների, առողջապահութեան, ընտանեկան սովորութիւնների, Զէյթունի քահանաների ձեռնադրութեան և կարգապահութեան և Զէյթունի շրջակայ դէրէրէնների մասին: Նրա նկարագրութիւնը մեծ արժէք ունի մեր աչքում, որովհետեւ նա մի անցորդ չէ, զանազան պատահական աղբիւրներից քաղուածքներ անող չէ, այլ բուն երկրում ծնուած-մնուած և երկար տարիներ ապրած մի անձնաւորութիւն:

Հետաքրքրութիւնից զուրկ չէ նաև յաւելուածի մնացած մասը: Ահա թէ այդ մասին ինչ է ասում ինքը հեղինակը իր առաջարանում.

«Աւելի լայնօրէն ծանօթացնելու համար Զէյթունի կեանքը հայ հասարակութեան, յարմար դատեցի անհատական քաջագործութիւններու մէկ քանի օրինակներ դնել քիչ մը ընդարձակ կենսագրութիւններով, ինչպէս Տէլի-քեշիշ, տէր-Օհանին և Դաւիթ վարդապետի, որոնք աւելի լոյս կ'ափուն և որոշ զաղագիար կուտան զէյթունցիի բնաւորութեան և յանդզնութեան, անոնց ասպետական ըմբռնումներուն, կրօնական համոզմունքին վրայ, Այնպէս որ այդ անհատական պատկերները կարող են առատ նիւթ և բաղդատութեան ընդհանուր եզրեր հայթայթել Զէյթունը ուսումնասիրել ուզողներուն համար...» Միանգամայն ճիշտ դիտողութիւն, որ իրաւացի կարող է համարուել նաև ամբողջ գրքի վերաբերմամբ:

Զէյթունցիի աշխատութիւնը շատ գնահատելի է ու հետաքրքրաշարժ և իբրև հում նիւթ։ Արժէ ծանօթանալ այդ նիւթի հետ, արժէ կարդալ այդ աշխատութիւնը։

Գրքին կցուած են Ֆանուզի վանահայր, Նշանաւոր հերոս Բարդուղիմէոս վարդապետի երկու պատկերները։

Ե, Թ.

Ա.ԴՕ, «ՄԱԿԵԴՈՆԻԱ», 1903 թ. Ս.-Պետերբուրգ. 22 երես, գինը 7 կոպ.

Մի փոքրիկ գրքոյկ է աս, որ հակերճ տեղեկութիւններ է տալիս մակեդոնացիների և մակեդոնական հարցի մասին։

Մակեդոնական շարժումը միայն մի օղակ է այն ընդհանուր շղթայի մէջ, որ միացնում է հայկական, ալբանական, քիւրդական և երիտասարդ թիւրքերի հարցերը, որ վաղուց արդէն յայտնի է «արենելեան հարց» անունով։ Այս ընդհանուր հարցը պարզելու համար անպայման հարկաւոր էր առաջ քաշել թիւրքիայի անցեալը, պետական բռնակալ րեժիմը. հարկաւոր էր քննել չարիքների բուն արմատը՝ երկրի տնտեսական սոցիալական քայլայիթը և գրա շարժառիթ պատճառները։

Բայց հեղինակը հեռու է եղել այդպիսի լայն նպատակից, ուստի բաւականացել է միայն մի քանի թուոցիկ տեղեկութիւններ հազորդելով Մակեդոնիայի տեղագրութեան, տարածութեան, բնական կարողութիւնների, պատմական անցեալների մասին։

Բարեբախտաբար նա կարողացել է այնպէս շաղկապել այդ տեղեկութիւնները, այնպիսի ձևով արտայայտել, որ գրքայկը կարգացւում է հետաքրքրութեամբ։

Առանձնապէս ուշագրաւ է այն կէտը, որով պ. Ա.Դօն